Ամփոփ նյութ

«ԱՐԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ» ԱՁ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 547) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ 20.10.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 547/02 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 211-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Ա/Ձ Արամ Առաքելյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 547 լիցենզիան: Նշվածը հաշվի առնելով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է.1» կետով և 39[12]-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված կարգավորումները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «Արամ Առաքելյան» ԱՁ (լիցենզիա թիվ 547) փոխանակման կետի նկատմամբ հարուցված վարույթը կարճվել է:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
09/01/2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/6 Ա
Ա/Ձ «ԱՐԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ» (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 547) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 547/02 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կարճել Ա/Ձ Արամ Առաքելյան փոխանակման կետի (լիցենզիա թիվ 547) նկատմամբ 20.10.2023 թվականի թիվ 547/02 արձանագրությամբ հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**